ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1/1 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018թվականի հոկտեմբերի 16-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2018 թվականի հոկտեմբերի 18-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

Կխնդրեի ներկայացնեիք յուրաքանչյուր լոտի շինարարական աշխատանքների համար նախատեսվող նախնական գումարի չափը և նախագծվող տարածքների մակերեսները: Նաև նշված չէ, թե ինչ լիցենզիա է հարկավոր աշխատանքները կատարելու համար:

Պարզաբանում

1. Դատական դեպարտամենտի կարիքների համար գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման հրավերի մեջ ներառված յուրաքանչյուր չափաբաժնի շինարարական աշխատանքների համար նախատեսվելիք նախահաշվային գինը կհաշվարկվի ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված նախագծող ընկերության կողմից:
2. Տարածքների մակերեսների և մնացած բոլոր հետաքրքրող հարցերի պատասխանները կարող եք ստանալ տեղում՝ այցելելով յուրաքանչյուր չափաբաժնի մասով նշված հասցե:
3. Հիմք ընդունելով լիցենզավորման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված աղյուսակի 17-րդ բաժնի 1-ին կետը՝ ընթացակարգի հրավերով լիցենզիա չի պահանջվում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Օֆելյա Ասատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: